

# **ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ**

Արարատ ամսաթերթի Յունվարի 27-րդ երեսում Արժ. Գ. Հ. Յովսէփեանի Հայոց Հայրապետական Արքու լիքնագրով գնահատելի մի յօդուածը արժանի է ախորժ հաճութեամբ որոնելու կարգալու և շնորհակալութեան:

Սակայն ցաւօք պէտք է ասել բացայայտ նաև՝ զի մի պարզ բերութիւնը, ՅՅ ըդ երես երկրորդ պարբերութիւն, յօդուածեամբողջութիւնը կիսանգարէ և քննադատելի միտքեր ու դադավարներ կպարզէ՝ երբ կգրէ. «Հայոց եկեղեցին մաքրել օտարաւ «մուտ ծէսերից (՝), սնոտիապաշտութեան կերպարանք (՝) և սոտացած սովորոյթներից և զարդարանկներից (՝), Խրախուսել «և զարկ տալ եկեղեցական ինքնուրոյն արուեստի և երգեցու «զութեան զարդացման, իրենց գոյութեան իրաւունքը կորցրած (՝) մեր վանքերին նոր կոչում (՝) ու նպատակ (՝) ներշնչել՝ «հիմնելով այնտեղ դպրոցական . . . բազմատեսակ (՝) հաստատ «տութիւններ . . . վերջապէս գումարել Ընդհանուր ազգաւ յին—Եկեղեցական ժողով (՝) . . . պարզել օտար ազգեցութեամբ «չափազանց խճողուած մեր ծիսապաշտութիւնն ու աստուած «պաշտութիւնը . . . Ամենայն Հայոց Հայրապետի իրաւասութեան «ենթարկուած հարցեր են»:

Ամենէն առաջ պէտք է հռչակել մի անգամ ընդ միշտ,  
որ ներկայ ժամանակ և պարագաներ, և երկար ատեն, չե՞ն նե-  
րեր երբէք, և չափազանց վտանգաւոր կլինի ընդհանուր Ազգա-  
յին-եկեղեցական ծողով դումարելը, թէ ներքին և թէ մասա-  
ւանդ արտաքին ոչ սակաւ կնճռու պատճառներով, թեե փա-  
փափելի եւ իւ անիրաժեք պէտք կայ կանոնական տեսութեամբ:

Նրկը ողդ, շատ թերի ենթագրութիւն է միայն և միմիայն ամենայն Հայոց Հայրապետի իրաւասութեան ենթարկուած հարցեր համարել բուօնմն մասնացով ցոյց տուածները, առանց եսլիսկոպոսական ժողովոյ հետ կանխաւ խորհրդակցելոյ և որոշելոյ՝ հրաւիրելով նաև խելահառ և բանգէտ՝ փորձառու և հմտա անձինքը՝ աշխարհական և եկեղեցական :

Եւ երբորդ, անցնելով առարկեալ խնդրոց, զեղծմանց, խանգարմանց և լուսականից պէտք է յականէ յանուանէ պարզել թէ որո՞նք են և ո՞ր մասերում մաքրուելիք օտարամուտ ծէսերը, մնութիւնապաշտութեան սովորոյթք և զարդարանքները, եկեղեցական ինքնուրոյն արուեստը և երգեցողութեան զարդացումը, և

Վանքերը ինչո՞վ գոյութեան իրաւունքները կորցրել են, և ո՞ր վանքում պիտի հիմնաւին բազմատեսակ հաստատութիւններ։ (Կերեակայէ ի մեջ մեծահարուստ վանքեր, որք միջոց կընան ունենալ բազմատեսակ հաստատութիւններ։ Բայց ուր են...)։

Նէսերուն այն ակնարկութիւնը առաձգական խօսք է և եթէ ջանք լինի այսուհետեւ զգուշանալ, որ և կարելի է իներկայումս, բաւական է։ Մանաւանդ խոշոր բանեք չեն երեխր։ Իսկ աւելի և ընդարձակ իմաստով ըմբռնելը և պնդելը, անփորձութիւն է, և սոսկալի հետեւանքներու և արգեանց գուռներ կըսնայ։ Թող որ անկարելի իսկ է, բաց ի առանձինն և տակաւ առ տակաւ գործելը՝ մի քանի թեթև նորոյթներու գէմ։

Թող հրամմէ երթայ յօդուածազիքը ս. Երուսաղէմ, ուր ո՞րշափի տարբերութիւնն պիտի տեսնէ, որք տեղական պայմաններու և օտարաց հետ եղած մըցմանց ծնունդներ են, ու պիտի մնան սահմանափակ, այսինքն Երուսաղէմի սահմանէն դուրս չպիտի ելնեն։ Բայց վերջապէս խոշոր տարբերութիւնը կան հանդերձ արտակարգ հանգէսներով։

Այսպիսի բացառիկ ծէսեր և սովորոյթք շատ առջեաց համար շեղած են տեղական պայմաններէն ստիպուած, և ո՞վ կհամարձակի խանգարել, և ի՞նչ վնաս՝ եթէ մնան կամ շարունակուին։

Միթէ ս. Էջմիածնում չկան, և ի՞նչ վնաս տուած են կամ կըսան։

Սնութիւնապաշտութեան վաստերը պէտք է ը ցոյց առուէին։ Եկեղեցւոյ զարդերը, պատկերները, մասունքները են և լուսականից պիտի լինի ի ներկայում, այս ի ներկայումս սմանց և աւելի տգէտներէն օտար պատուաստներ ներմուծել ջանալոյն գէմ։ Նոր ձեռնարկի պէտք չկայ։

Բայց գուցէ յօդուածազը գրածը աւելի քննադատելի տարբեր իմաստ ունի, և ս. Օրմանեանի բազմից բերնէն թռուցած ներշնչումներու վերադրելի, անդիտակից գաղափարներով։ Ի՞նչ պէտք եղել Հայկական ձայնագրութիւն, և թէ եղածը Պապա Համբարձութինն է եղել և օտար...։ Եւրոպականը բաւական է եղել։

Բայց գուցէ յօդուածազը գրածը աւելի քննադատելի տարբեր իմաստ ունի, և ս. Օրմանեանի բազմից բերնէն թռուցած ներշնչումներու վերադրելի, անդիտակից գաղափարներով։ Ի՞նչ պէտք եղել Հայկական ձայնագրութիւն, և թէ եղածը Պապա Համբարձութինն է եղել և օտար...։ Եւրոպականը բաւական է եղել։

գանքերու համար ակնարկեալը բոլորովին քննադատելի է յոյց տուած եղանակով կամ առաջարկութեամբք, Ահա Մայր Աթոռը, ահա ո. Երուսաղէմը, մեր առաջին և նույիրական վանքերը, չե՞ն կարող յաջող ձեմարան, Դպրանոց և լին պահել, ուր կմնան ուրիշները:

Արդ չեր սպասուեր և ոչ փափաքելի էր որ հոգելոյս և քազմարգիւն Տ. Գէորգ Գ. Հայրապետի սկզբանց և գաղափարներուն ու ջանից հետ բոլորովին անհաշտ եղող այնպիսի յօդուածք երևէին նոր վեղարաւորներէն՝ եթէ Գէորգեան ձեմարանի սանունք են այսպիսի մաքեր երազողները: Եւ միշտ ցաւալի է տեսնել այսպիսի գաղափարներ մեր նորահաս վեղարաւորներում: Թէև յաճախ ձեմարանի վեղարաւոր և անվեղար սանուց գրածները գնահատելի են և ախորժելի:

Երբ ի Թուրքիա մի քանի Օքմաչական անփորձ և իմաստակ վեղարաւորներ, գլխաւորապէս Օքմանեան կրթութենէ՝ ներշնչումներէ հրապուրուած և խրախուսուած՝ մոլորեալ այսպիսի միտքեր կցնդաբանեն նոյն եկեղեցւոյ՝ վարդապետութեանց՝ ծիսից՝ արարողութեանց՝ կանոնաց և այլոց գէմ, և կը պաշտպանուին իսկ Օքմանեանէն, մինչ եկեղ. հարազատ և հաւատարիմ իշխանութիւն կուզէ ի զգաստութիւն բերել, և ողջամիտ մամուլ ու ժողովուրդ կը քննադատեն և կը գատապարտեն, ներելի՝ է արգեօք կարծել՝ որ միենոյն ներշնչումները հասած են այդք և մի քանի նորահաս վեղարաւորները խմորած ի խմորոյ Փարիսեցւոց և կեղծաւորաց: Գուցէ, քանի որ ո. Օքմանեան մի տարի ուսուցիչ եղաւ Գէորգեան ձեմարանում և մի քանիներու հետ յարաբերութիւն կմշակէ:

Արդ այսպէս կամ այնպէս, եթէ մամլոյ ազատութեան հետեանքով այժմ ի մուսիսա վեղարաւորներէն ումանք իսկ ազատ գաղափարներ ցրուելու կը հրապուրուին, փափաքելի էր որ առանց պատահարներու ու ջանքերու հետեւն ու արձագանք դառնան: Եւ այսպէս աւելցնեն Գէորգեան ձեմարանի պատիւը, ու օրհնուին հոգելոյս Ս. Գէորգ Հայրապետէ Ազգիս Միանգամայն հաւատարմութեամբ Ազգիս և եկեղեցւոյ ծառայելու գետակցութիւնը և միթիթարութիւնը ունենան: Երբ ներկայս կը կնքեմք, չեմք կարող զարմանքներս չյայտնել, որ յօդուածագիր Արժ. Տ. Գարեգին գ. Յովսէփեան յաճախ փայլած է ողջամիտ գաղափարներով և գնահատելի յօդուածներով, ու այս անգամ ինչպէս նորիմաստ քննադատելի պատուաստներով, որպիսիքը միշտ և հանապազ Հռովմայի ջուրերը խմող գլուխ-

Ներէն կրդիտեն, ինչպէս շատ օրինակներ տեսնուած են, և կը ներշնչուին աչքերու մոխիր լիչելով և հրապութիչ ձուլումներ հռչակելով մարդեկը որսալու համար։

Եղբարք, ի ոէր Աստուծոյ, զգուշացէ՛ք այսպիսի վտանգաւոր հորութիւններէ, մի՛ հեռանաք հին ողջամիտ (բայց ոչ ցընդամիտ) գաղափարներէ և ջանքերէ, որոց մէջ են Հայ. եկեղեցականութեան՝ եկեղեցւոյ՝ և Աղքէ իրական փառքը՝ պարծանքը և փրկութիւնը։

Բացակայ միաբան.

Մենք սիրով և հաճութեամբ տպեցինք հացակայ Միաբանուի այս նկատողութիւնները ոչ այն համոզմամբ, որ նա յիշաւի ուշադրութեան արժանի սրբագրութիւններ է տալիս մեր հարևանցի յայտնած մտքերի դէմ, այլ ընթերցողների համար պարզելու, թէ նոյն իսկ հին սերնդի մի պատկառելի ներկայացուցիչ որչափ քիչ հասկացողութիւն և գիտակցութիւն ունի մեր եկեղեցու իսկական ցաւերի և ներկայ դրութեան մասին։ Առ այժմ հարկ ենք համարում ինետեեալ նկատողութիւններն մեր անել իբրև պատասխան և լուսաբանութիւն ընթերցողների համար, ապագային թողնելով աւելի պարզել մեր հայեացքները։

Բոլոր կրօններին և եկեղեցիներին յատուկ երեսոյթէ, որ երբ հաւատացեալների մէջ պակասում է իսկական կրօնական կեանքն ու զգացումը, կենդանի հաւատը, նորատեղ բռնում է հետզեաէ արտաքին ծէսն ու պաշտամունքը։ Հայոց եկեղեցու ծիսապաշտութիւնն ու ժամերգութիւնը խճողուել է սկսում նախ օրթոդոքս եկեղեցու, իսկ աւելի յետոյ լատինական եկեղեցու ազգեցութեամբ։

Բոլորովին անհնար չէ, եթէ ոչ ամենայն ճշդութեամբ, գոնէ մօտաւոր գաղափար կազմել մեր ժամապաշտութեան և արարողութեան զարգացման մասին։ Ինչպէս պէտք է բացատրել երկար, ժամեր տեղը ընթերցուածների ծագումը մեր եկեղեցու մէջ, բայց եթէ կենդանի և ինքնուրոյն խօսքի բացակայութեամբ, ինչով

պէտք է բացատրել նոյն աղօթքների և շարականների եռակի կրկնութիւնը, բայց եթէ կրօնական զգացման թու լութեամբ Մենք ծէսն ու արարողութիւնը, հոգեոր երգերն ու աղօթքները հասարակաց ժամապաշտութեան ժամանակ շատ կարեւոր ենք համարում հօտի կրօնական և բարոյական դաստիարակութեան համար, նոքա մեր մէջ վոեմ զգացումներ և կրօնական ջերմեռանդութեան տրամադրութիւն են ստեղծում, բայց մարդկային հոգուն յատուկ չէ ժամերով կրաւորական վիճակի մէջ մնալ, այն էլ առանց կարողութիւն ունենալու հետեւլու իւր առաջ կատարուած ժամապաշտութեան Արդեօք «Բացակայ Միաբանա-ը իւր պաշտօնակիցներից և ժողովութից յաճախ դժկոհութիւն չի լսել մեր ժամապաշտութեան չափա-զանց երկարութեան համար և այդ երկարութիւնը չէ պատճառ, որ ժամերգութեան տեսողութեան ժամանակ ժողովուրդը շարունակ ել ու մռատ է անում և խանդա-րում արբազան արարողութիւնը և աղօթաւորների խորա-սուզուած և ջերմեռանդ տրամադրութիւնը Միթէ նո-րութիւն է յօդուածագրի համար, թէ մեր եկեղեցու «ժա-մապաշտութիւնն ու աստուածպաշտութիւնը չափազանց խճողուած» է կամ շատ դաւառներում օտարամուտ ծէ-սեր և սովորոյթներ կան Արդեօք Հայոց եկեղեցուն յա-տուկ է օրհնեալ ջրի աւազան գնել եկեղեցու դրան մօտ, որպէս զի ներս մտնողները մատները թաթախեն երես-ները խաչակնքելու համար, աւագ ուրբաթ օրը «Քրիս-տոսի դագաղ» շինել թափորով պտաեցնել եկեղեցու շուրջը Հայոց եկեղեցուն յատուկ է «իկոնապաշտութիւնը» կամ «օքրազապաշտութիւնը» Հայոց եկեղեցու մէջ պատկերա-յարդութիւնը մերժուած չէ, բայց նա աթոռից զբկել է հայ կաթուղիկաններից մէկին «իկոնապաշտութեան» հակում-ներ ցոյց տալու համար Արբոց պաշտամունքը, աւելի ճիշդ յարգանքը, տեղ տեղ չափազանցութեան և սնո-տիապաշտութեան չենք հասցըել. մի քանի տարի առաջ չէր, որ դաշտից հաւաքած ոսկորները մեր աչքի առաջ իրրե Լուսաւորչի մասունք էին ուզում հոչակել և խեղճ

ժողովրդի գիւրահաւատութիւնը նիւթական շահերի և վաճառքի միջոց ընտրում։ Հայոց եկեղեցական արուեստի ինքնուրոյնութիւնը պահպանելու և զարգացնելու համար ինչ ջանք և աշխատանք ենք գործադրել։ Մտէք Վրաստանի և Ռուսաստանի հայ եկեղեցիները և օտար ազգեցութեան հետեւանըները ձեզ համար պարզ կլինեն, ճարտարապետութեան, զարդարանքի, պատկերների, սպառների և հանդերձանքի վերաբերութեամբ։ Նոյն իսկ շատ եկեղեցիներում թզթի կամ մետաղի անհոռի պատկերներ կգտնեք։ Հայոց եկեղեցական երաժշտութիւնն արդէն կատարելութեան է հասած յօդուածագրի համար և բարեփոխութեան կարիք չունի։ այդ ճաշակի և հասկացողութեան խնդիր է, սկզբնական վիճակի մէջ եղած ազգերի երգեցողութիւնն ու նուագը փոքր և շատէ կիրթականջը ծակել կարող է, իսկ նրանց մեծ հաճոյք է պատճառում։ Որքան մենք յարգանք և պատկեռանք զգանք Գէորգ Դ., Կաթուղիկոսի յիշատակի առաջ, և դուցէ ոչ պակաս, քան յօդուածագիրը, բայց ընդունել չենք կարող, թէ նորա ներմուծած «հայկական» կոչուած ձայնագրութիւնը բաւական է այն կրօնական զգացումն ու ջերմեռանդութիւնը զարթեցնելու հօտի մէջ, որ մենք սպասում ենք իսկական կրօնական եղաժշտութիւնից։ Ա. Օրմանեանը, որի կարծիքը դժգոհութեամբ մէջ է բերում յօդուածագիրը, շատ աւելի ճիշդ գաղափար ունի այդմասին, քան ինքը։

Հարցական նշաններ է դրել յօդուածագիրը նաև վանքերի վերաբերութեամբ յայտնած մեր կարծիքի մասին։ Չենք կարծում, թէ նա անապատականութեան և ճգնաւորութեան գաղափարի պաշտպան լինի, իսկ դորանից դուրս յայտնի է, որ վանքերը դպրոցական, բարեգործական և քաղաքակրթական կեդրոններ են հանդիսացել պատմութեան մէջ։ Հարկ չկայ պարզելու, թէ նոքաիրենց նպատակին չեն ծառայում այժմ։ պէտք է կենացնացնել գարձեալ վանքերի նախկին կոչումը։ Ճշմարիտ է, շատ հարուստ չեն նրանք, բայց քիչ չեն և այնպիսի

վանքեր, որոնք իրենց կալուածներով և եկամուտներով կարող են մի բարի նպատակի ծառայել, եթէ նրանց եկամուտները խելացի կերպով գանձուին և գործադրուին, ժողովրդին ևս աջակցութեան հրաւիրելով բարենպատակ հաստատութեան պահպանութեան մէջ։

Ընդհանուր ազգային եկեղեցական ժողովի գումարումը ոչ միայն վտանգաւոր չենք համարում, այլ առանց այդպիսի ժողովի անկարելի է կարգաւորել մեր եկեղեցու վարչական, ծիսական և միւս բարեկարգելի խնդիրները։ Իսկ մեր եկեղեցին բարեփոխութեան և կտրդաւորութեան անպայման կարիք ունի, եթէ նորա քայլայման առաջն առնել և կոչման բարձրութեան վերայ պահել ենք կամենում և այս թմրած վիճակից հանելը Ամենայն ինչ կախուած է մեր զգաստութիւնից։ Նախ մեզ համար պարզ պէտք է լինի, որ ընդհանուր ազգային-եկեղեցական ժողովը քաղաքական խնդիրներով զբաղաւելու կոչում չունի, իսկ եկեղեցական խնդիրների լուծման մէջ էլ որոշ նախապատրաստութիւն և զգուշաւորութիւն է պէտք։ Առհասարակ ոչ մի տեղ այնքան խոհեմութիւն և աչալրջութիւն չի պահանջում, որքան կրօնական խնդիրների մէջ։ որովհետեւ ոչ մի բան էլ մարդկութեան համար այնպէս նուիրական և գնահատելի չէ, ինչպէս կրօնական բարիքը։ Սակայն զեկավարող հոգիների որբազան պարտքն է հսկել, որ սուրբն ու մաքուրը չժանգուածի կամ հողի մէջ ծածկուի։ Մեր ժողովրդի բարոյական վերածնութիւնը կրօնական հողի վերայ պէտք է կատարուի, ինչպէս և ամէն մի իսկական վերածնութիւն, իսկ այդ վերածնելի թանձրացեալ մարմինը Հայոց ազգային, ինքնուրոյն և դարաւոր եկեղեցին է։ Այդ վերածնութեան և վերակազմութեան մեծ զարկ կարող է տալ ի միջի այլոց ազգային-եկեղեցական ժողովը։ Հայոց Հայրապետը միայն այդ ժողովի ձեռներէցութեան, նախագահութեան և զեկավարութեան իրաւունքն ունի. յօդուածագրի կողմից թիւրիմացութիւն է կարծել, թէ մենք վերոյիշեալ պարբերութեան մէջ

յայտնուած «թռուումն մասանցով հարցերը» «միմիայն աշմենայն Հայոց Հայրապետի իրաւասութեան ենթարկուած» ենք համարում «առանց եսլիսկոպոսական ժողովոյ հետ խորհրդակցելոյ»։ Առաւել ևս թիւրիմացութիւնն է «ազատ անմտութեան հոսանքին մոլորութեանց» վերագրել մեր յայտնուած մաքերն ու ցանկութիւնները եկեղեցու բարեկարգութեան և վերակազմութեան մասին։ աւելի լաւ է սրբազան յօդուածագիրը իւր ուշադրութիւնը դարձնի տգիտութեան այն թանձր քողի վերայ, որ ձգուած է մեր եւեսին և անընդունակ է դարձնում մեզ տեսնել և ըմբռնել մեր եկեղեցու խոկական վերքերը և նրանց դարմանելու միջոցները։

«Բացակայ Միաբան»-ի սիրտը հաւանօրէն չի ճմլուել այն տիսուր իրողութեան առաջ, թէ ինչպէս Հայոց եկեղեցին քայքայւում է հետզհետէ, կորցնում իւր ազդեցութիւնն ու զեկավարութիւնը ժողովրդի կրօնական-բարոյական դաստիարակչութեան և քաղաքակրթական յառաջագիտութեան գործում։ Նորա բարոյական ազդեցութիւնը թուլացել է նոյն իսկ եկեղեցու պատերի մէջ, որովհետեւ կենդանի խօսքն ու եկեղեցու գոյութեան հիմնաքար կրօնական սրբազան հոգին տեղի է տուել ծիսապաշտութեան և անտարբեր ձևականութեան։ Կարող էք առանց խորին վրդովմունքի ականատես լինել, թէ ինչ գուեհիկ տեսարաններ են կատարւում պսակների, հազորդութեան, տօնական ժամերգութիւնների ժամանակ, առաւել ևս աւագ ուրբաթ գիշերը, որ մեր կրօնական կեանքի ամենասրբազան վայրկեաններից մէկը պիտի լինէր։ Նկատել է յօդուածագիրը դարերի ընթացքում իւր եկեղեցու ծոցում փրկութիւն որոնող ժողովրդի, այն էլ կրթուած դասի, անտարբերութիւնը, նոյն իսկ թշնամական դիրքը դէպի եկեղեցին և նորա պաշտօնէութիւնը, որ արհամարհանքի առարկայ է։ Ճիշդ դազափառ ունի հայ հոգեորականութեան տգիտութեան, սիմօնականութեան, անհաւատարիմ պաշտօնավարութեան և աչառոտ դատավալութեան մասին։ Ի՞նչ են այս բոլոր տիսուր երեւ-

Հոյթների պատճառները. կարելի է միայն նոր ժամանակի հակակրօնական ուղղութիւնների ազգեցութեամբ կամ նիւթապաշտական հայեացքների տիրապետութեամբ բացատրել, թէ կան նաև ներքին, պատմական խորին պատճառներ։ Մենք այս բոլոր վէրքերի բուժումը Հայոց եկեղեցու վարչական, ծիսական վերակազմութեան, կրօնական վերակենդանութեան և այս հոգեւով կրթուած, գիտական կարողութիւններով օժտուած հոգեորականութեան մէջն ենք տեսնում։ Խոկ Դուք ի՞նչ ունիք ասելու ի վերջոյ թոյլ ենք տալիս մեզ մի նկատողութիւն անել յօդուածագրին մի աններելի ակնարկի համար։ Նակասկած է յայտնում, որ մէջ բերած պարբերութեան մտքերը կարող ենք «անդիտակից գաղափարներով» գրած լինել Ա. Օրմանեանի ներշնչումներով, որովհետեւ մի տարի ուսուցչութիւն է արել Գէորգեան Ճեմարանում «և մի քանիներու հետ յարաբերութիւն կմշակէ»։ Այնքան անհիմն է այս ենթադրութիւնը և իրականութիւնից հեռու, որքան սուտը ճշմարտութիւնից Բայց աւելի հետաքրքրական է նորա մի նոր յայտնութիւնը, որպէս թէ Ա. Օրմանեանի ներշնչումներով և պաշտպանութեամբ «մի քանի արմաշական անփորձ և իմաստակ վեղարաւորներ» «այսպիսի մտքեր կցնդարանեն նոյն եկեղեցւոյ՝ վարդապետութեանց, ծիսից, արարողութեանց, կանոնաց և այլոց դէմ», «մինչ եկեղ. հարազատ եւ հաւատարիմ իշխանութիւն կուղէ ի զգաստութիւն բերեր։ Միթէ Տաճկաստանում էլ մտադիր են «աբեղայական հալածանք» սկսել փոքր ի շատէ ուսում ստացած եկեղեցականների դէմ, ինչպէս փորձեր եղան մի քանի տարի տուած մեր մէջ։ Ո՞ւմ դէմ է ընդգծուած «հարազատ և հաւատարիմ» խօսքերը։ Այդ անհարազատն ու անհաւատարիմը Օրմանեան Սրբաղանն է, յօդուածագրի կարծիքով, որ կրքոտ հաշիւներ ունի նորա հետ, և ապա արմաշական ու էջմիածնի «մի քանի նորահաս վեղարաւորները», որոնք «խմորած» են «ի խմորոյ վարիսեցւոյ և կեղծաւորաց», Յօդուածագրի անդիտութեան և յաւակնութեան աւելի գե-

զեցիկ վկայական չի կարող լինել, քան այն կարծիքը, թէ այս տեսակ մտքերը «միշտ և հանապազ Հռոմայի ջուրերը խմող գլուխներէն կը դիմուի»։ Կարող էր տղէտ լինել եկեղեցական պատմութեան մէջ, բայց զարմանալի է, որ գաղափար չունի մեր ժամանակում կատարուած իրողութիւնների մասին ևու ի՞նչ կասեն մեր յօդուածադրին Հռոմի ճիղուիթները, որոնք յանձին Պիոս Փ. պապի կատաղի պատերազմ են սկսել կաթոլիկ «մոդերնիստների» գէմ։—Ենորհաւորում ենք Զեղ, եղբայր, կասէին, որ Դուք Հայոց եկեղեցու մէջ նոյն դերն էք յանձն առել, ինչ որ մենք կաթոլիկ եկեղեցու մէջ։

Գ. Վ. Յավուեփեան.



### ՄԱՅՐ ԱԹՈՒՐ

Ապրիլի 6-ին Մայր Աթոռ ժամանեց Պարսկաստանի և Հնդկաստանի առաջնորդ Տ. Սահակ Արքեպիսկոպոս Այվատեան, իսկ 4-ին Տ. Բենիկ վարդապետ, որ Բեսարաբիայի թեմի կոնսիստորիայի նախանդամ էր։

Տ. Ներսէս վարդապետ Տ. Միքայէլեան նշանակուած է հիւրընկալ, յուսալ կարող ենք, թէ նորա տեսչութեան տակ Մ. Աթոռի հիւրատանը վերջապէս կարգաւորութիւն և մաքրութիւն կհաստատուի Մ. Աթոռի հիւրերն առաջին տպաւորութիւնը հիւրնկալից են ստանում. նոր հիւրընկալը բարձրագոյն, եւրոպական կրթութիւն ստացած մարդ է և անշուշտ նորա առաջնորդութեամբ հիւրերը քաղցր տպաւորութիւն կտանեն Ա. Էջմիածնից։

Ամենապատիւ Տ. Տեղակալը առաջադրել է Տփխիսի և Երեանի առաջնորդներին Դանձակի և Հ. Նախիջեանի փոխանորդութիւնների համար ընտրութիւններ կատարել։